ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06» 04 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 19.02.2021թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-21-7/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և 2-ի:

1.2 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով, Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1,603,100,000 (մեկ միլիարդ վեց հարյուր երեք միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան Պուշկինի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1660006430550100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02665864
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-2 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը՝ մինչև 2021թ.-ի մայիսի 31-ը
1.	Բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) (կտրոն)/	լ	200,000	343	68,600,000	200,000
2.	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)/	տ	1,500	409,000	613,500,000	1,500
3.	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) կտրոն/	լ	1,000,000	319	319,000,000	1,000,000
4.	Դիզելային վառելիք /Ամառային դիզ.վառելանյութ/	տ	2,000	287,000	574,000,000	2,000
5.	Դիզելային վառելիք /Ամառային դիզ.վառելանյութ կտրոն/	լ	100,000	280	28,000,000	100,000

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-2 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկա	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2021թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ., ընդ որում՝		
				2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1.	Բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) (կտրոն)/	09132100/506	68,600,000	68,600,000	68,600,000	68,600,000
2.	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)/	09132400/506	613,500,000	613,500,000	613,500,000	613,500,000
3.	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) կտրոն/	09132200/506	319,000,000	319,000,000	319,000,000	319,000,000
4.	Դիզելային վառելիք /Ամառային դիզ.վառելանյութ/	09134240/506	574,000,000	122,600,000	574,000,000	574,000,000
5.	Դիզելային վառելիք /Ամառային դիզ.վառելանյութ կտրոն/	09134200/506	28,000,000	28,000,000	28,000,000	28,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ